ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ /ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

« 14 » դեկտեմբեր 2016թ. ԹԻՎ 8-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, 53-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	կողմ՝9	դեմ՝0	ձեռնպահ՝0
1. Ախվերդյան Օնիկ			
2. Ավետիսյան Աղվան			
3. Գալստյան Տիգրան			
4. Կարապետյան Լևոն			
5. Կարապետյան Հայկ			
6. Հարությունյան Դավիթ			
7. Հովսեփյան Ռշտունի			
8. Սմոյան Սմո			
9. Քամալյան Էդգար			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ. ՄԻՐԶՈՅԱՆ*

2016 թվականի դեկտեմբերի «14»
գ. Բաղրամյան /Վաղ./

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի
ԹԻՎ 8-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԲԱՂՐԱՄՅԱՆ /ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատակիցների կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016 թ դեկտեմբերի 14–ի թիվ 8- Ն որոշմամբ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ....
4. ՀՋՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀՋՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆՔԻ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան /Վաղ./ համայնքի 2017 - 2021 թթ. համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-ի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը, ինչպես նաև հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Այս ծրագրի գլխավոր նպատակը մեկն է. հզորացնել համայնքը՝ բացահայտելով նրանում թաքնված ներուժը: Այդ նպատակին հասնելու համար առաջիկա 5 տարիների ընթացքում ձեռնարկելու է հետևյալ նպատակային քայլերը.

- բացահայտելու է գյուղական համայնքի առավելությունները և միավորելով բնակիչների ջանքերը՝ իրականացնելու է այդ ներուժը,
- այնպիսի գիտելիք և հմտություն է հաղորդելու ապագա ձեռնարկատերերին, որոնք կօգնեն նրանց ստեղծել մրցունակ և կայուն բիզնես մոդելներ,
- օժանդակելու է համայնքային նոր ենթակառուցվածքների ստեղծման և հների արդիականացման աշխատանքներին,
- առավելագույնս նվազեցնելու է մարդկային գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ,
- հատուկ ուշադրություն է դարձնելու կանանց և երիտասարդների խնդիրներին՝ վերջիններիս համար ստեղծելով աշխատատեղեր և գործարարությամբ զբաղվելու նոր հնարավորություններ:

Համայնքի հիմնական պրոբլեմների շարքին են դասվում մանկապարտեզի, բուժամբուլատորիայի և մշակույթի տան շենքերի անբարենպաստ պայմանները, խմելու ջրի ջրագծերի անմխիթար վիճակը, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը, որոնց հիմնական պատճառ են հանդիսանում երկար տարիների աշխատանքից առաջացած մաշվածությունը:
Զարգացման հիմնական խոչընդոտ է հանդիսանում ֆինանսական միջոցների սակավությունը:
ՀՀԶԾ մշակմանը մասնակցել են համայնքապետարանի բոլոր աշխատակիցները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Համայնքի տարածքը կազմում է 1076 հեկտար:

Համայնքի առաջին բնակիչները եկել են Սիրիայից և Իրաքից և նրանց առաջարկությամբ էլ համայնքը անվանվել է Սովետական միության զինված ուժերի մարշալ Հովհաննես Բաղրամյանի անունով: Հետագայում համայնքը համալրվել է Շիրակի, Կոտայքի և հանրապետության այլ շրջաններից:
Համայնքը սահմանակից է Այգեկ, նորակերտ, Մուսալեռ, Սասունիկ և Պտղունք համայնքներին: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից 10կմ է, իսկ մարզկենտրոնից՝ 35 կմ:
Կլիմայական պայմանները կիսաանապատային, չոր ցամաքային են: Ամռանը միջին ջերմաստիճանը +30^0 C, ձմռանը՝ -8^0 C: Վերջին տարիների բնական աղետները (ցրտահարություն, կարկտահարություն) վատ են անդրադարձել համայնքի գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Այդպիսի աղետները կանխելու համար համայնքում տեղադրվել է երկու հակակարկտային կայան:

Համայնքում ապրում են 2828 բնակիչներ, այդ թվում՝

1.	Կանայք	1374
2.	Տղամարդիկ	1454
3.	0-6 տարեկան բնակիչների թիվը	180
4.	7-17 տարեկան բնակիչների թիվը	465
5.	18-63 տարեկան բնակիչների թիվը	1876
6.	63-ից բարձր տարեկան բնակիչների թիվը	307
7.	Կենսաթոշակառուներ	285
8.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	6
9.	Հաշմանդամներ	59
10.	Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	68
11.	Տնային տնտեսությունների թիվը	650
12.	Ուսանողներ	44

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքի ավագանու անդամների թիվը – 9
Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ դրույքաչափերով:

2016 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ/ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 13

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Աղյուսակ 1.

Հ/Հ	Աշխատակիցների քանակ	Հաստիքացուցակ	Պաշտոնային դրույքաչափ
1	1	Համայնքի ղեկավար	280000
2	1	Համայնքի ղեկավարի տեղակալ	210000
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
1	1	Աշխատակազմի քարտուղար	210000
2	2	Առաջատար մասնագետ	180000
3	2	Առաջին կարգի մասնագետ	140000
4	2	Երկրորդ կարգի մասնագետ	110000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
1	1	Վարորդ	100000
2	1	Հավաքարար	73000
3	2	Պահակ	100000
	13		

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 58,900.0 հազար դրամ, որից համայնքի սեփական եկամուտները կազմում են 16,5%:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի գյուղատնեսության հիմնական ճյուղերն են՝

- Հողագործություն
- Անասնապահություն
- Այգեգործություն

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու և առվույտի արտադրությամբ, խաղողի և պտղատու ծառերի (խնձոր, ծիրան, դեղձ) մշակմամբ: համայնքի բնակիչները զբաղվում են նաև ջերմոցային մշակաբույսերի /լոլիկ, վարունգ, կանաչի և այլն/ և ծաղիկների /վարդ, մեխակ և այլն/ աճեցմամբ:

Գյուղատնտեսությամբ զբաղվում են մոտ 904 բնակիչ:

2. Համայնքի գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակներն են.

- Ցորեն
- Գարի
- Կարտոֆիլ
- Լոլիկ
- Վարունգ
- Բանջարաբոստանային մշակաբույսեր
- Խաղող
- Ծիրան
- Կաթնամթերք
- Միս
- Ձու

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Համայնքում գործում են <<Բաղրամյանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝ նախատեսված 100 երեխաների համար, ինչպես նաև Բաղրամյանի միջն. դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որտեղ սովորում են 363 աշակերտներ:

Համայնքում գործում է նաև <<Մշակույթ>> միացյալ տնօրինությունը, որի կազմում է գտնվում գրադարանը: Մշակույթի տան աշխատանքները միտված են զարգացնելու նոր սերնդի մշակութային գիտելիքների ավելացմանը և մշակույթի հզորացմանը:

Համայնքում կան ընտանեկան նպաստների համակարգում գրանցված 73 ընտանիքներ:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Գալիք հինգ տարիների ընթացքում պետության կողմից համայնքում նախատեսվում են իրականացնել հանրապետական և մարզային հետևյալ ծրագրերը.

- Համայնքում գործող մանկապարտեզի կապիտալ վերանորոգում
- Համայնքում գործող բժշկական ամբուլատորիայի կապիտալ վերանորոգում
- Համայնքի խմելու ջրի ջրագծերի ամբողջական վերանորոգում
- Համայնքի մշակույթի տան շենքի կապիտալ վերանորոգում
- Համայնքի սեփականաշնորհված հողատարածքների ոռոգման ցանցի կապիտալ վերանորոգում

Նշված ծրագրերի իրականացման դեպքում համայնքում նախատեսվում է՝

- Մանկապարտեզ հաճախող երեխաների բարեկեցիկ, ապահով և հարմարավետ պայմաններում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը: Պայմանների բարելավումը կնպաստի նաև հարևան համայնքների երեխաների ներգրավումը մանկապարտեզում:
- Համայնքի բնակիչներին առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու պայմանների բարելավում, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովում և համայնքի բնակիչների առողջական վիճակի բարձրացում:
- Այժմյան պայմաններում քայքայված ջրագծերը սպարնում են վարակակիր հանդիսանալ համայնքի բնակչության համար: Վերանորոգման արդյունքում համայնքը ապահովված կլինի խմելու ջրից վարակվելու վտանգից: Այս խնդրի լուծման արդյունքում կլուցվի նաև ջրի բավականին մեծ չափերի հասնող կորստի խնդիրը:
- Մշակույթի տան վերանորոգումը նպատակ է հետապնդում բարձրացնել համայնքում պատմամշակութային արժեքները և պատկերավոր ներկայացնել պատմական և մշակութային իրադարձությունները և նրանցում կարևոր դեր ունեցած գործիչներին: Նախատեսվում է բարձրացնել բնակիչների հոգևոր, ռազմահայրենասիրական և գեղագիտական դաստիարակության մակարդակը: Նպատակներից է նաև պայմաններ ստեղծել համայնքի բնակիչների հանգիստը անցկացնելու ավելի հաճելի մթնոլորտ ստեղծելու համար:
- Համայնքի սեփականաշնորհված հողատարածքների ոռոգման ցանցի վատ վիճակը պատճառ է հանդիսանում համայնքում հողագործությամբ զբաղվող ածնանց կրճատմանը: Ցանցի վերանորոգման արդյունքում նախատեսվում է ավելի քան հիսուն հողատերերի ներգրավում հողագործության մեջ(ավելի քան 100 հա հողատարածք), ինչպես կանխատեսվում են նոր հողատարածքների ձեռքբերում և մշակում:

Տեղացի և արտասահմանյան բարերանների կողմից նախատեսվում են ստանալ աջակցություն համայնքի զբոսայգու բարեկարգման աշխատանքներին և համայնքի բարեկարգմանը ուղղված մի շարք այլ աշխատանքներին:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Աղյուսակ 2. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստացի 01.10.2016	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	67797.5	54510.9	59137.0	60174.0	61250.0	62210.0	62590.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	59380.0	45587.4	59137.0	60174.0	61250.0	62210.0	62590.0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	10138.9	8667.4	10010.0	10210.0	10400.0	10650.0	10860.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	6418.9	2569.7	4010.5	4110.0	4200.0	4300.0	4460.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	986.6	799.9	710.5	760.0	800.0	850.0	960.0
	Հողի հարկ	3632.3	1769.7	3300.0	3350.0	3400.0	3450.0	3500.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	5271.6	5940.2	6000.0	6100.0	6200.0	6350.0	6400.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	5271.6	5940.2	6000.0	6100.0	6200.0	6350.0	6400.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	248.4	157.5	562.5	600.0	640.0	660.0	680.0
	Տեղական տուրքեր	248.4	157.5	562.5	600.0	640.0	660.0	680.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	47789.8	35782.0	47064.6	47664.0	48360.0	48900.0	49000.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	47789.8	35782.0	47064.6	47664.0	48360.0	48900.0	49000.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	44345.8	35298.2	47064.6	47664.0	48360.0	48900.0	49000.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	3444.0	483.5					
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով							

	ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	**Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	1451.6	1138.0	1499.4	1700.0	1850.0	2000.0	2050.0
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	**Գույքի վարձակալությունից եկամուտներ**	196.9	124.7	199.4	200.0	200.0	200.0	200.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	196.9	124.7	199.4	200.0	200.0	200.0	200.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	**Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից**, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	**Վարչական գանձումներ**	1254.7	777.2	1300.0	1500.0	1650.0	1800.0	1850.0
	Տեղական վճարներ	1254.7	777.2	1300.0	1500.0	1650.0	1800.0	1850.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	**Մուտքեր տույժերից, տուգանքներից**							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	**Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**							
3.8	**Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**							
3.9	**Այլ եկամուտներ***		236.1					
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							

	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		236.1					
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	-200.7	-1834.8					
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր		-110.0					
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր		-110.0					
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-200.7	-1724.8					
	Հողի իրացումից մուտքեր	-200.7	-724.8					
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ՊԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	8417.1	8923.5					
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)							
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	8417.1	8923.5					
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ծեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	8417.1	8923.5					
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում							

	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ							
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Աղյուսակ 3. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն
(եկամտների և ծախսերի կանխատեսումը)

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. տարեկան պլան	2017թ. կանխ.	2015թ տոկոս %	2018թ. կանխ.	2015թ տոկոս %	2019թ. կանխ.	2015թ տոկոս %	2020թ. կանխ.	2015թ տոկոս %	2021թ. կանխ.	2015թ տոկոս %
Ընդամենը եկամուտներ	59380,3	59137	1,00	60174	1,01	61250	1,03	62210	1,05	63190	1,06
Հարկային եկամուտներ, որից	9890,5	10010,5	1,01	10210	1,03	10400	1,05	10650	1,08	10860	1,10
Հողի հարկ	3632,3	3300	0,91	3350	0,92	3400	0,94	3450	0,95	3500	0,96
Գույքահարկ	6258,2	6710,5	1,07	6860	1,10	7000	1,12	7200	1,15	7360	1,18
Տեղական տուրքեր	248,4	562,5	2,26	600	2,42	640	2,58	660	2,66	680	2,74
Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	47789,8	47064,6	0,98	47664	1,00	48360	1,01	48900	1,02	49600	1,04
Այլ եկամուտներ	1451,6	1499,4	1,03	1700	1,17	1850	1,27	2000	1,38	2050	1,41
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-200,7	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00
Տարեսկզբի ազատ մնացորդ	8417,1	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00
Ընդամենը	67797,4	59137	0,87	60174	0,89	61250	0,90	62210	0,92	63190	0,93
Ընդամենը ծախսեր	**58873,9**	**58937**	1,00	**60174**	1,02	**61250**	1,04	**62210**	1,06	**62590**	1,06
Ընթացիկ ծախսեր, այդ թվում	57560,9	58937	1,02	60174	1,05	61250	1,06	62210	1,08	62590	1,09
Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ	31312,1	29750	0,95	30200	0,96	31320	1,00	33600	1,07	34950	1,12
Ապրանքն. գնման և ծառ. վճ. ծախս	23923,1	9268	0,39	24768	1,04	25000	1,05	25500	1,07	26200	1,10
Սուբսիդիաներ	0	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00

Դրամա-շնորհներ	0	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00
Սոցիալական նպաստներ	1864,2	2500	1,34	2600	1,39	2650	1,42	2700	1,45	1400	0,75
Այլ ծախսեր	461,5	17419	37,74	2606	5,65	2280	4,94	410	0,89	40	0,09
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում	1313	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00
Հիմնական միջոցներ	1313	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00	0	0,00

Կանխատեսումները պայմանավորված են վերը նշված խնդիրների լուծման հետևանքով համայնքի բնակչության կանխատեսվող աճի նվազագույն մակարդակով, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում ակնկալվող տնտեսական աճով:

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի առջև ծառացած հիմնական խնդիրներն են՝

- Մանկապարտեզի շենքի անմխիթար վիճակը և պայմանների բացակայությունը
- Բժշկական ամբուլատորիայի շենքի ամխիթար վիճակը և պայմանների բացակայությունը
- Խմելու ջրի ջրագծերի քայքայվածությունը
- Մշակույթի տան շենքի վատթար և վթարային վիճակը
- 300 հա սեփականաշնորհված հողամասերի ոռոքման ցանցի բացակայությունը

Խնդիրների առաջացման պատճառ է հանդիսանում երկար տարիների շահագործման արդյունքում առաջացած մաշվածությունը: Շենքերը և ջրագծերը շահագործման են հանձնվել 1961-1967թթ. և օգտագործվում է մինչև օրս առանց վերանորոգման:
Խնդիրների հետևանքով երեխաների մոտ կարող են առաջանալ առողջական խնդիրներ, առաջին բժշկական օգնության համապատասխան տրամադրումը բավական բարդ է ոչ համապատասխան պայմաններում և կարող է խնդիրների հետևանք դառնալ, ջրագծերի քայքայվածությունը կարող է խոլերայի տարածման աղբյուր հանդիսանալ և սպարնալ բնակիչների առողջությանը, իսկ ոռոգման ցանցի բացակայությունը պատճառ է հանդիսանում գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների շարունակական նվազմանը:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում և վերլուծություն

Ուժեղ	Թույլ
• Բնակլիմայական բարենպաստ պայմաններ • Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն • Համայնքի գազաֆիկացման բարձր մակարդակ • Հեռախոսակապի և բոլոր հեռուստաալիքների հնարավորություն • Մարզական կառույցի առկայություն և համայնքի մարզիկների միջազգային նվաճումներ • Բնակչության համախմբվածություն ու միասնականություն	• Արտագաղթի բարձր մակարդակ • Խմելու ջրի և ոռոգման համակարգերի վերանորոգման անհրաժեշտություն • Անբարեկարգ փողոցների առկայություն • Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Գործազրկության բարձր մակարդակ

Հնարավորություն	Սպառնալիք
• Աշխատուժի ավելցուկ • Հեռանկարային ծրագրեր, որը կբերի ֆինանսական կայունության • Համայնքի ղեկավարը և ավագանին մեծ վստահություն ունեն բնակչության մեջ	• Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Աղքատության բարձր մակարդակ • Գործազրկության բարձր մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Ուղեղների արտահոսք

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Բաղրամյանի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	28%	25,5%	22,2%	20,4%	18,2%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	7.18%	2.36%	-2.52%	-0.38%	-0.32%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1,8%	2%	2,3%	2,5%	2.8%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

Համայնքում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնելով բարեկեցիկ:

- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու քաղաքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը.
- ապահովել կապիտալ ներդրումներ համայնքի ճանապարհային տնտեսության, հանգստի և բակային տարածքների բարեկարգման բնագավառներում.
- ապահովել համայնքի նախադպրոցական, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների շենքերի հիմնական վերանորոգման, ջեռուցման, ջրամատակարարման վերականգնման և գույքի ձեռք բերման աշխատանքներ
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները
- համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում
- համայնքի զբոսայգում իրականացնել բարեկարգման և կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ
- համայնքապետարանի ենթակայության կազմակերպություններում իրականացնել գույքային և տեխնիկական վերազինում

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ Համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում,
- ✓ Համայնքի բժշկական ամբուլատորիայի կապիտալ վերանորոգում,
- ✓ Խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում,
- ✓ Մշակույթի տան հիմնանորոգում,
- ✓ Սեփականաշնորհված հողամասերի ոռոքման ցանցի կառուցում և առկա ցանցերի վերանորոգում.

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թ.թ.)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	2017	2018	2019	2020	2021
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ					
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	28%	25,5%	22,2%	20,4%	18,2%
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	7.18%	2.36%	-2.52%	-0.38%	-0.32%
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով	1,8%	2%	2,3%	2,5%	2.8%
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ					
1. Համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում	17000.0	17000.0	17000.0	17000.0	17000.0
2.Համայնքի բժշկական ամբուլատորիայի կապիտալ վերանորոգում	2000.0	15000.0	10000.0	10000.0	10000.0
3.Խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում	12000.0	12000.0	12000.0	12000.0	12000.0
4.Մշակույթի տան հիմնանորոգում	-	-	15000.0	20000.0	20000.0
5. Սեփականաշնորհված հողամասերի ոռոգման ցանցի կառուցում և առկա ցանցերի վերանորոգում	-	-	5000.0	8000.0	7000.0

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՒ

«Համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ Երեխաներին ապահովել ուսումնադաստիարակչական գործընթացում բարեկեցիկ և հարմարավետ միջավայր	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	17000.0	17000.0	17000.0	17000.0	17000.0

Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2000.0	-	-	-	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1500.0	17000.0	17000.0	17000.0	17000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախահետազոտական ծախսեր: 1.2.Նախահաշիվների կազմում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Նորգման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 40000.0հազար դրամ Կապիտալ ծախսեր՝45000.0հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝85000.0հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ 2

« Համայնքի բժշկական ամբուլատորիայի կապիտալ վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ Բնակչության առաջին բուժօգնության ապահովում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2000.0	15000.0	10000.0	10000.0	10000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. 2. Բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000.0				
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000.0	15000.0	10000.0	10000.0	10000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախահետազոտական ծոխսեր 1.2. Նախահաշիվների կազմում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Նորգման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 20000.0հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 27000.0 Ընդհանուր բյուջեն՝ 47000.0հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						

Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բժշկական ամբուլատորիայի կապիտալ վերանորոգում

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N3

« Խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ապահովել բնակիչների պատշաճ և սանիտարական նորմերին համապատասխան ջրամատակարարում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	12000.0	12000.0	12000.0	12000.0	12000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1000.0	-	-	-	-
2. Խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	11000.0	12000.0	12000.0	12000.0	12000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախահետազոտական ծախսեր 1.2. Նախահաշիվների կազմում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Նորոգման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 350000.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 250000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝60000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N4

«Համայնքի մշակույթի տան հիմնանորոգում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի մշակույթի տան հիմնանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Մշակույթի տան հիմնանորոգում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	15000.0	20000.0	20000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	-	2000.0	-	-
2.Նորոգման աշխատանքներ	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
					13000.0	20000.0	20000.0
Ծրագրի հիմնական	1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում						

գործողությունները	1.2.Շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը 1.3. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 350000.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 20000.0 Ընդհանուր բյուջեն՝ 550000.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մշակույթի տան հիմնանորոգում

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ 5

« Սեփականաշնորհված հողամասերի ոռոքման ցանցի կառուցում և առկա ցանցերի վերանորոգում»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Վարչական շենքի ջեռուցման ցանցի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Գյուղատնտեսության զարգացում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	-	5000.0	8000.0	7000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	-	1000.0		
2.Բրեկարգում, ջեռուցման համակրգերի կառուցում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	-0	4000.0	8000.0	7000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 15000.0հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 15000.0հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սեփականաշնորհված հողամասերի ոռոգման ցանցի կառուցում և առկա ցանցերի վերանորոգում						

4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Բաղրամյան համայնքի ՀԶՀԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. ՀԶՀԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

(Բաղրամյան համայնք)

(2017-2021 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջետա-վորված միջոցներ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ						Ծախսերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ			
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Երաշխիք պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/ Հովիրատվություն	Ֆինանսավոր հատված	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթացում են բանակցություններ	Ներկայացվել է	Ֆինանսավորման
1. Համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում	85000.0	17000.0	17000.0	17000.0	17000.0	17000.0	10000.0	75000.0					40000.0	45000.0	10000.0	75000.0		
2.Համայնքի բժշկական ամբուլատորիայի կապիտալ վերանորոգում	47000.0	2000.0	15000.0	10000.0	10000.0	10000.0	5000.0	42000.0					20000.0	27000.0	2000.0			45000.0
3.Խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում	60000.0	12000.0	12000.0	12000.0	12000.0	12000.0	6000.0	54000.0					35000.0	25000.0	6000.0	54000.0		
4.Մշակույթի տան հիմնանորոգում	55000.0	-	-	15000.0	20000.0	20000.0	5000.0	50000.0					35000.0	20000.0	5000.0			50000.0
5. Սեփականաշնորհված հողամասերի ոռոգման ցանցի կառուցում և առկա ցանցերի վերանորոգում	15000.0	-	-	5000.0	8000.0	7000.0	15000.0							15000.0	3000.0			12000.0

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 7-*ում* ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 7. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(_____ թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաքագրման առանձնահատկությունը		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
																	Կիսամյակային	Տարեկան		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																				
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)																		X	Մարզպետարաններ (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արարատ, Ջերմուկ համայնքների համար՝ համայնքապետարաններ)	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով																	X	ՀՀ Ոստիկանություն	Հարցում
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																			
1.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ																			
1.1.Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգումը և մշակութային կյանքի աշխուժացում																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
2. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն																			
2.1. Համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
3.Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը																			
3.1. Բազմաբնակարան շենքերի տանիքների կապիտալ վերանորոգում																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

3.2. Համայնքի ոռոգման ցանցի կապիտալ վերանորոգում																		Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
3.3. Համայնքի խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում																		Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
4.Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում																			
4.1. Համայնքի բուժամբուլատորիայի կապիտալ վերանորոգում																		Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով Բաղրամյան/Վաղ./ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2017-2021թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել՝ որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

Համայնքապետարանի աշխատակիցները կմշակեն իրենց բնագավառի զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, մարզպետարան: Լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N8-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N8-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է ապահովելու համայնքի կենսական շահերը՝ համայնքային կառավարման սկզբունքներին ու օրենքով սահմանված լիազորություններին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԻՐԶՈՅԱՆ